# Արցախ. լուռ, անաղմուկ տեղահանություն

Շարունակվում է Հադրութի շրջանի «խաղաղ» տեղահանությունը: Վերջին օրերի բռնի միջոցառումները, որոնք Արցախի տարածքում անցկացվել են խորհրդային զորքերի եւ օմոնականների ջանքերով, խուճապ են առաջացրել արցախցիների մի մասի մոտ: Օգտվելով խորհրդային բանակի ընձեռնած ուղղաթիռներից, սրանք մեծ գումարների գնով թողնում են հարազատ տները ու գյուղերը եւ տեղափոխվում Զանգեզուրի տարբեր շրջաններ: Այսպես օրինակ՝ հունիսի 21-ին Զանգեզուրում վայրէջք կատարեցին 3 ուղղաթիռ, մոտ 60 արցախցիներով:

Զինվորականները, օգտվելով վերեւների քաղաքական խաղերից եւ գումարներ դիզելով, «խաղաղ» տեղահանում են Արցախի ժողովրդին: Այն չի կանգնեցվում ոչ Արցախի, ոչ Հայաստանի, ոչ էլ կենտրոնական իշխանությունների ուժերով:

Ադրբեջանական իշխանությունները շարունակում են գրգռություններ կազմակերպել Արցախի սահմանամերձ շրջաններում. հունիսի 18-ին ականանետներից ու հեռահար այլ զենքերից գնդակոծվել է Մարտունու շրջանի Ավդուռ գյուղը: Միայն երջանիկ պատահականությամբ է, որ զոհեր չեն եղել: ■